ՆԿԱՐԱԳԻՐ

առաջարկվող ապրանքի ամբողջական

ԱՁ Գոհար Արամյան-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/27 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

Չափաբաժնի համար	Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը
1	1.Շքերթային մարզահագուստ -Բաճկոն և Տաբատ (Կոստյոմ),-որից՝ XS չափսի - 25 հատ, S չափսի - 70 հատ, M չափսի - 126 հատ, L չափսի - 120 հատ, XL չափսի - 70 հատ, XXL չափսի - 30 հատ, XXXL չափսի - 12 հատ, XXXXL չափսի - 5 հատ: Ընդամենը՝ 458 հատ: • Բաճկոնը պետք է պատրաստված լինի հարթ ներկված կտորից • Բաղադրությունը՝ 100 տոկոս պոլիեսթերից, մարմնի և թևերի հատվածը կրկնակի տրիկոտաժից: • Բաճկոնի կողային և թևատակի հատվածները պատրաստված լինեն վերամշակված ինժեներական ցանցով • պարանոցի և թևի հատվածները լինեն հատուկ ներդիրներով՝ անտիստատիկ ծածկույթով, ցանցանման կառուցվածքով տրիկոտաժե ենթաաստառային կտավից , բաղադրությունը՝ 100 տոկոս պոլիեսթեր • Օձիքը կայուն, ներքին օձիքը և մանժետները պետք է լինեն սպիտակ առաձգական ժապավենից • Բաճկոնը պետք է լինի ուղիղ ուրվագծով, ճարմանդի ժապավենաթելի վրա կենտրոնական ճարմանդով • կողային գրպանները ճարմանդային ժապավենաթելով Բաճկոնի ծածկույթային վերջառություններին նշված լինի <<ֆիրմայի անունը>> • Բաճկոնի վրա պետք է լինի ասեղնագործված <<Հայաստանի Հանրապետության զինանշան/ Հայաստանի Հանրապետության դրոշ >>>, <<ARMENIA>> Տաբատը պետք է ունենա՝ • Բաղադրությունը՝ 100 տոկոս պոլիեսթերից, մարմնի և գոտկատեղի հատվածը կրկնակի տրիկոտաժից: • Տաբատը պետք է փոքր-ինչ ստորին հատվածում նեղացված լինի,կողային գրպաններով, կայծակ ճարմանդով՝ Գոտին էլաստիկ ժապավենաթելով:Գոտու լայնությունը կարգավորվում է թելով-լարով, որը ներդրված է • Տաբատի արտաքին կողային հատվածները պատրաստված լինեն վերամշակված ինժեներական ցանցով • Տաբատի ոտքերի հետևի մասերում պետք է առկա լինեն տրիկոտաժից

	առաձգական ժապավեններ, բաղադրությունը՝ 100 տոկոս պոլիեսթեր • Կողային հատվածների վրա սպիտակ բարձրացված առաձգական ժապավենի առկայությամբ • Տաբատի ստորին հատվածը մշակված լինի կողային ճարմանդով, հարմարավետության համար • Տաբատի վրա նշված լինի <<ֆիրմայի անունը>> 2. Սպորտային շապիկ (պոլո), որից՝ XS չափսի - 25 հատ, S չափսի - 70 հատ, M չափսի - 126 հատ, L չափսի - 120 հատ, XL չափսի - 70 հատ, XXL չափսի - 30 հատ, XXXL չափսի - 12 հատ, XXXXL չափսի - 5 հատ: Ընդամենը՝ 458 հատ: • Սպորտային շապիկ (պոլո) պետք է պատրաստված լինի (ՊԻՔՈՒԵ-PIQUE) - տրիկոտաժե կտորից, բաղադրությունը՝ 100 տոկոս վերամշակված պոլիէսթեր • Շապիկի կողային և թևատակի հատվածները պատրաստված լինեն վերամշակված ինժեներական ցանցով • Օձիքը պատարստված լինի տրիկոտաժե կտորի կտավից • Արտադրանքի ստորին հատվածը մշակված լինի կարերով ծալատակերում բաց կտրվածքով: • Թիկունքի բկանցքի հատվածը ամրացված լինի կոնտրաստային գույնի եզրաժապավենով, որը կանխարգելում է բկանցքի ձգվածությունը: • Շապիկի վերին հատվածը պետք է ունենա կտրվածք՝ երկու կոճակով • Շապիկի վրա նշված լինի <<ֆիրմայի անունը>> • Շապիկի վրա լինի՝ ժակկարդային հեծանակ ասեղնագործված <<Հայաստանի Հանրապետության զինանշան>>, ժակկարդային հեծանակ <<Հայաստանի Հանրապետության Դրոշ/Ազգային Թիմ>>, <<ARMENIA> 3. Երկարաթև մարզաշապիկ - որից՝ XS չափսի - 25 հատ, S չափսի - 70 հատ, M չափսի - 126 հատ, L չափսի - 120 հատ, XL չափսի - 70 հատ, XXL չափսի - 30 հատ, XXXL չափսի - 12 հատ, XXXXL չափսի - 5 հատ: Ընդամենը՝ 458 հատ: Մարզաշապիկը պետք է պատրաստված լինի՝ երկարաթև, տրիկոտաժե ընդգծող, էլաստիկ կտորից, տրիոկտաժը պետք լինի 100% վերամշակված պոլիէսթեր , Բկանցքի կտրվածքը՝ V-աձև: Մարզաշապիկի կտորը պետք է պարունակի Primegreen նյութ՝ պատրաստված վերամշակված մանրաթելից: Շապիկի վրա նշված լինի <<ֆիրմայի անունը>>,<Հայաստանի Հանրապետության զինանշան/ Հայաստանի Հանրապետության դրոշ >>, <<ARMENIA>> : Շապիկի վրա լինի վերջառությունները՝ ժակկարդային հեծանակ : 4. Կիսատաբատ (շորտ) - որից՝ XS չափսի - 25 հատ, S չափսի - 70 հատ, M չափսի - 126 հատ, L չափսի - 120 հատ, XL չափսի - 70 հատ, XXL չափսի - 30 հատ, XXXL չափսի - 12 հատ, XXXXL չափսի - 5 հատ: Ընդամենը՝ 458 հատ: Կիսատաբատները պետք է պատրաստված լինի ՝ • Կիսատաբատների մարմնի և գոտկատեղի հատվածները պատրաստված են 100% վերամշակված պոլիեսթեր կրկնակի տրիկոտաժից • Շորտի վերին կողային հատվածները պատրաստված լինեն վերամշակված ինժեներական ցանցով • Գոտու ներսում ներդրված է լար/քուղ գոտու կարգավորման համար՝ ըստ ծավալի ու ֆիքսացիայի: • Շորտի ստորին հատվածը մշակված է կողային կայծակ ճարմանդով, հարմարավետության համար, այն պեքտ է ունենա նաև կողային գրպաններ՝ ճարմանդով • Շորտի վրա նշված լինի <<ֆիրմայի անունը>>, <<Հայաստանի Հանրապետության զինանշան/ Հայաստանի Հանրապետության դրոշ >>, <<ARMENIA>>, դեկորատիվ պրինտ: • Շորտի վրա լինի վերջառությունները՝ ժակկարդային հեծանակ 5. Ջերմացված բաճկոն – որից՝ XS չափսի - 25 հատ,

S չափսի - 70 հատ, M չափսի - 126 հատ, L չափսի - 120 հատ, XL չափսի - 70 հատ, XXL չափսի - 30 հատ, XXXL չափսի - 12 հատ, XXXXL չափսի - 5 հատ: Ընդամենը՝ 458 հատ: Ջերմացված բաճկոնը պետք է պատրաստված լինի ՝ Կտորի բաղադրությունը 100 տոկոս պոլիեսթեր, պոլիուրետանային ծածկույթով և ջրահեռացնող հագեցվածությամբ ։ Կայծակ ճարմանդի ժապավենաթելի վրա կենտրոնական ճարմանդով՝ կոճակով գրպանիկով: Կողային գրպանները կոճակագամային փականներով: Օձիքը կայուն է: Օձիքը, թևքերի մանժետները ու ստորին հատվածի գոտին մշակված են տրիկոտաժե կտորե կտավով: Ջերմացված բաճկոնի ծածկույթային վերջառությունների վրա ասեղնագործված հեծանակ <<ՀՀ զինանշան>>, ապպլիկատիվ ասեղնագործված <<ARMENIA և ֆիրմայի անունը>>: 6. Ձույգ սպորտային կոշիկ –որից՝ 35 չափսի – 5 զույգ, 36 չափսի - 10 զույգ, 37 չափսի - 20 զույգ, 38 չափսի - 30 զույգ, 39 չափսի - 60 զույգ, 40 չափսի - 50 զույգ, 41 չափսի - 70 զույգ, 42 չափսի - 95 զույգ, 43 չափսի - 80 զույգ, 44 չափսի - 20 զույգ, 45 չափսի - 10 զույգ, 46 չափսի -8 զույգ: Ընդամենը՝458 հատ: Մարզակոշիկ /կրոսովերներ /ամառային/ Սպորտային կոշիկ փողոցային սպորտի զանազան թեթև ատլետիկական տեսակների համար, առավել շատ՝ վազքուղում, ասֆալտի կամ փափուկ գրունտի վրա վազելու համար: Մարզակոշիկը պետք է պատարստված լինի բարձրորակ արհեստական նյութերի համադրությունից ՝ թեմոպլաստիկ պոլիուրետան, արհեստական կաշվից տարրեր՝ լուսաարտացոլող էֆեկտով, ինչպես նաև երկշերտ ցանցանման կտորներ, որոնք ապահովում են բարձր օդաթափանցելիություն կոշիկի ամբողջ շահագործման ընթացքում՝ թույլ տալով դրանում պահել օպտիմալ ջերմաստիճան: Կրոսովերի կրունկի հատվածը ներսից պետք է պատրաստված լինի հատուկ ճկվող նյութից, մաշվածության դեմ կայուն ռեզինից, որը երկարացնում է կոշիկի շահագործման տևողականությունը՝ բարելավելով մակերևույթի հետ շփումը: Կոշիկի ներդիրը պետք է լինի օրթոպեդիկ: Ներբանի վերին հատվածը պատրաստված լինի գելային ներդիրներով, որը նրան դարձնում է թեթև ու ճկուն: Կոշիկի վրա նշված լինի նաև ֆիրմային անվանումը: 7. Սպորտային պայուսակ– Ընդամենը՝ 458 հատ: Պայուսակը պետք է պատրաստված լինի հարթ ներկված կտորից 600D կառուցվածքով, հակառակ կողմի ծածկույթով P/D ամրության համար, ջրահեռացնող հագեցվածությամբ և ծածկույթով: Պայուսակը նախատեսված է անձնական իրերի տեղափոխման համար,ունի արժանի արտաքին տեսք ու պատշաճ որակ, որը կարող է ներկայացվել պարգևատրման նպատակների տեսանկյունից, այդ թվում նաև՝ արտասահմանյան երկրներում: Քանի որ ունի ազգային խորհրդանիշ: Սպորտային պայուսակ- տեղափոխման համար բռնակներով, կոշտ հատակով:Բոլոր նյութերը պատրաստված լինեն բարձրորակ հումքից, կայուն ե պատռվածքների նկատմամբ, կայուն են հաճախակի լվացումների ժամանակ, մաշվածությանը, ունեն կայուն խոնավապաշտպան առանձնահատկություններ:Վերջառություններ՝ Պրինտ <<ARMENIA>>/ պրինտ <<արտադրողի անունը>>/պրինտ <<Հայաստանի Հանրապետության դրոշ>>/<<ՀՀ զինանշան>>, Ծանոթություն. Շքերթային մարզահագուստը,

	սպորտային շապիկը (պոլո), երկարաթև մարզաշապիկը, կիսատաբատը և ջերմացված բաճկոնը՝ հաճախակի լվացումների դեպքում պետք է լինեն կայուն և պիլլինգի չենթարկվեն, չընդարձակվեն, լինեն անտիստատիկ վերամշակված: Մարզահագուստը նախատեսվում է սրահներում ու դրսում հագնելու համար՝ արտասահմանյան երկրներում մարզական միջոցառումների բացման և փակման արարողության, ինչպես նաև պարգևատրմանը ներկայանալիս: Շքերթային մարզահագուստը, սպորտային շապիկը (պոլո), երկարաթև մարզաշապիկը, կիսատաբատը, ջերմացված բաճկոնը, սպորտային կոշիկները պետք է լինեն նույն ֆիրմայի արտադրության: Մատակարարը պարտավորվում է ներկայացնել նամակ հավաստագիր կամ համապատասխանության սերտեֆիկատ արտադրող ֆիրմայի կողմից: Կատարողը իրականացնում է բոլոր կազմակերպչական աշխատանքները՝ համաձայնացնելով ՀՀԿԳՄՍ նախարարության սպորտի քաղաքականության վարչության հետ: • Ապրանքները պետք է լինեն նոր՝ չօգտագործված: • Ապրանքների փոխադրումը և բեռնաթափումը իրականացվում է կատարողի կողմից՝ ամբողջ քանակը հանձնելով ՀՀԿԳՄՍ նախարարությանը՝ ք. Երևան Վ. Սարգսյան 3, սպորտի քաղաքականության վարչություն: • Պայմանագրի կատարման փուլում համապատասխանության սերտիֆիկատի ներկայացման անհրաժեշտություն: • Լրակազմի մեջ ներառված ապրանքները պետք է լինեն նույն ապրանքային նշանի: • Մրցույթի մասնակցի կողմից ներկայացված ապրանքանիշը պետք է պարտադիր գրանցված լինի WIPO ապրանքայյին նշանների միջազգային բազայում:

ПОЛНОЕ ОПИСАНИЕ

предлагаемого товара

ԱՁ Գոհար Արամյան в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-22/27 ниже представляет полное описание предлагаемого им товара.

Номер лота	Предлагаемый товар
	технические характеристики
1	